ԳՐՈՂԵՐԵՆԵՍԻՐԵՑԵՆ



ՄՈՏԵՑԵՔ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ՆԱ ԿՄԵՐՁԵՆԱ ՁԵԶ

Վազգեն վարդապետ Միրզախանյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Անառակի Կիրակիին

(23 փետրվար 1997 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»:
«Որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:
/Ղուկ. ԺԵ 24/

Սիրելի հավատացյալներ, մեր Եկեղեցու սրբազան հայրերը իմաստուն կերպով են հաստատել Մեծ պահքի կիրակիների խորհրդի ոսկե շղթան, որ յուրաքանչյուր քրիստոնյայի խորհելու առիթ է տալիս: Նրանցում արծածված են մարդու դրախտային երանավետ կյանքը, ապա անհնազանդության պատճառով արտաքսվելը այնտեղից, աշխարհ հասկացության կործանարար երևույթը, մարդու պատասխանատվությունը Աստծու և իր նմանի հանդեպ, Տիրոջ երկրորդ գալուստը և աստվածային տնօրինության բազում այլ գաղափարներ: Ահա սրանցից մեկի՝ աշխարհ-մարդ-Աստված հարաբերություն հարցի քննումն է, որը դարձել է այս կիրակի օրվա խորհուրդը: Սրան հիմք է հանդիսացել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պատմած առակներից մեկը, որն Ավետարանում վերնագրվել է «Անառակ որդի» անվանումով:

Սուրբ Ղուկաս Ավետարանիչը, վկայելով Հիսուսի քարոզչության մասին, գրում է, որ իր առաքյալներին մեկ առակ ևս պատմեց: Այն անառակ որդու մասին էր: Նրա բովանդակությունը հետևյալն է.

Մի մեծահարուստ մարդ երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը, վերցնելով իրեն հասանելիք ողջ հարստությունը, գնաց հեռու մի աշխարհ, այնտեղ իր ողջ կարողությունը վատնեց, աղքատացավ և ապա ստիպված դիմեց տեղի քաղ-

ափացիներից մեկին, որպեսզի նրա խոզերը պահի: Եվ այն աստիճան քաղցած ու ծարավ էր, որ փորձում էր խոզերի կերակուրից սնվել, սակայն տերը թույլ չէր տալիս: Եվ ահա անառակ որդին անդրադառնում է, որ հեռու երկրում իր հայրն ունի բազում ծառաներ, որոնք աշխատում և իր հոր կողմից տրված սնունդով են ապրում: Խորհում է՝ թողնել և գնալ նրա մոտ ու զղջալով կանգնել ու ապաշխարել նրա առաջ:

Եվ այդպես էլ վարվեց: Շուտով վերադարձավ իր հայրենի աշխարհ, և երբ անառակ որդու հայրը իմացավ իր որդու գալուստը, շտապեց նրան ընդառաջ, գրկախառնվեց ու համբուրեց նրան: Եվ որդին, դիմելով հորը, ասաց. «Հա՛յր, մեղա երկնքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու» /Ղուկ. ԺԵ 21/: Եվ անմիջապես հայրը, իր որդու գալուստով անչափ ուրախացած, ասաց, որ իր որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց:

Եվ ապա հրահանգեց մի մեծ խնջույք կազմակերպել և տոնախմբել այս իրադարձությունը: Սակայն նրա ավագ որդին, որ հավատարմությամբ ու խոնարհությամբ ծառայել էր իր հորը, դժգոհություն հայտնեց՝ ասելով. «Այս քանի տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել, սակայն ինձ երբեք մի ուլ չտվեցիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի, բայց երբ եկավ քո այդ որդին, պարարտ եզը նրա համար մորթեցիր» /Ղուկ. ԺԵ 29-30/:

Եվ նույն խոսքերը, որ այսօր մեր քարոզի բնաբանն էր, դիմելով իր ավագ որդուն՝ ասաց հայրը. «Որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:

Սիրելիներ, «Անառակ որդու» առակի խորհուրդն ամբողջությամբ ընկալելու և հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ երեք հիմնական հանգամանքների.

Առաջին՝ Անառակ որդու թողնել և հեռանալը տարաշխարհ:

Երկրորդ՝ Անառակ որդու զղջալը և դարձը դեպի հայրենի տուն:

Երրորդ՝ Հոր սիրով ու ջերմությամբ ընդունելը որդուն:

Մարդը երբեք չի կարող թողնել այս աշխարհը, հեռանալ մի այնպիսի վայր, որտեղ Աստված չլինի: Տեղին է այստեղ հիշել մարգարեի խոսքը. «Տեր, բարձրացա երկինք, և Դու այնտեղ ես, իջա երկիր, դժոխք, և Դու այնտեղ ես»: Ուստի, Աստված ամենուր է, և ի՞նչ կարող է անել մարդը, որպեսզի իր եսասիրական կամ աշխարհապաշտական մոլուցքն իրականացնի: Այս առնչությամբ նա իր մեջ կոչնչացնի Աստծու հավատքը, Աստծու գիտակցությունը, քանի որ Աստծու ներկայությունը մարդու հոգևոր կյանքում, նրա սրտում և մտքում երբեք չի թողնի, որ նա կատարի աշխարհային գործեր, որոնք չար են Աստծու առաջ: Իմաստության գրքում հիշված անզգամի պես պիտի ժխտի Աստծու գոյությունը, որպեսզի հնարավորություն ունենա իր չար և վատ գործերը կատարելու:

Ավետարանը վկայում է, որ անառակ որդին գնաց տարաշխարհ և իր ամբողջ հարստությունը վատնեց այնտեղ:

Այո, մեղավորը, հեռանալով Աստծուց, կորցնում է իր ամբողջ շնորհները՝ հույսը, հավատը, սերը, խաղաղությունը, երջանկությունը: Եվ այս ամենը կորցնելով՝ անդրադառնում է, որ ինքն այլևս աղքատացած է, և ունենում է հոգու սով՝ ճիշտ մարգարեի խոսքերի նման. «Ես ձեզ տալու եմ ոչ թե մարմնեղեն սով և ջրի ծարավ, այլ ես ձեզ պիտի տամ հոգևոր սով և հոգու ծարավ»: Հիրավի, Աստծուց հեռու գտնվելը մարդուն դարձնում է ապաշնորհ: Տեղին է, որ այստեղ հիշենք սուրբ Առաքյալներից Հակոբոսի խոսքերը, որտեղ ասվում է. «Սերն

աշխարհի հանդեպ թշնամություն է Աստծու դեմ, քանի որ ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կանի»:

Եվ ահա անառակ որդին սիրեց աշխարհը, գնաց աշխարհ, այն աշխարհը, որ ողջ մարդկությանը հոգնեցրել և ձանձրացրել է իր չարությամբ, իր գորշությամբ: Այդ աշխարհի մեջ ինքը չկարողացավ պահպանել իր ինքնությունը, այլ դարձավ այդ աշխարհի ծառան: Անառակ որդին մտածում էր, թե ինքը պիտի գնա այլ երկիր և ունենա իր ազատությունը: Բայց ազատություն հասկացությունը իր համար շատ սխալ ընկալվեց: Այդ ազատությունն իրեն տարավ դեպի ավելի մեծ ծառայության՝ մեղքի ծառայության և մեղքի կապանքների:

Նորից հիշենք Ավետարանից՝ Հովհաննես առաքյալի Ընդհանրական թղթից հետևյալ տողերը. «Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ ինչ որ այս աշխարհի մեջ կա: Թե՛ այս աշխարհն է անցնում, թե՛ ցանկությունը: Իսկ ով կատարում է Աստծու կամքը, մնում է հավիտենական»: Ահա այստեղ քննենք՝ տեսնելու, թե ինչն է մարդկային կյանքի համար կարևոր. ժամանակավո՞րը, թե՞ հավիտենականը: Ո՞րն է առաջնայինը մեզ համար. թերևս այս աշխարհում ունենանք դժվարություններ, բայց պահպանենք մեր մեջ Աստծուն, որպեսզի ժառանգենք հավիտենական կյանքը: Իսկ այս աշխարհի այս րոպեական հաճույքներն ապրելով՝ կկորցնենք հավիտենական կյանքը:

Երկրորդ հանգամանքն է՝ անառակ որդու զղջալը և վերադարձը: Այդտեղ կարևոր է, որ մեղավորն իր ներսում անդրադառնա, թե ինչպիսի՛ն էր ինքը մինչև մեղանչելը և ինչպիսի՛ն է մեղանչելուց հետո, ի՛նչ ուներ և ի՛նչ կորցրեց: Եվ ահա պիտի տեսնի, որ ուներ բազում շնորհներ, և այսօր ինքն աղքատ է, ուներ առատ կերակուր, բայց այսօր ինքը քաղցած է, ուներ բազում բարեկամներ, բայց այսօր ինքը միայնակ է մնացել, պատիվների էր արժանանում, բայց այսօր ինքը խոզապահությամբ է զբաղվում: Նախ անհրաժեշտ է, որ մեղավորը հստակ կերպով դառնա դեպի Աստված և երբեք չտատանվի: Այդ դարձը պիտի լինի զղջումով, ապաշխարությամբ և ապա խոստովանությամբ, ինչը որ արեց ինքը՝ անառակ որդին. զղջաց, ապաշխարեց, վերադարձավ հոր մոտ և խոստովանեց հոր առջև՝ ասելով. «Հա՛յր, մեղա երկնքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»:

Սիրելի հավատացյալներ, ինչպես մեր խոսքի սկզբում նշեցինք, մարդը չի կարող հեռանալ Աստծու ամենատես աչքից: Այս նաև վկայում է Ս. Հովհան Ոսկեբերանը՝ ասելով. «Ո՛վ Տեր, մեղավորն ու՞ր կարող է փախչել Քեզանից: Նա հեռանում է Քեզանից ու կրկին դեպի Քեզ գալիս, փախչում է Քո քաղցրությունից և դատաստանիդ առաջ գալիս»:

Այո, ու՞ր կարող է փախչել մարդ Աստծու ամենատես աչքից: Հետաքրքիր է մարդկային հոգեբանությունը: Թողնելով Աստծու շնորհները՝ այն քաղցրությունը, այն սերը, որով մեզ շրջապատում է Աստված, գնում ենք աշխարհ՝ որոնելու աշխարհի մեջ ինչ-որ մի նոր երջանկություն, բայց տեսնելով այդ ամենի անցողականությունը՝ նորից դառնում ենք դեպի Աստված:

«Այստեղ՝ աշխարհում, նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի՛ աշխարհին»: Մեղավոր մարդը մեր Տեր Հիսուս Քրիստոսի այս խոսքերը պիտի միշտ ունենա իր մտքում՝ քաջալերվելու համար, որպեսզի դառնա դեպի Աստված և երբեք չմոռանա, որ իր համար միշտ հնարավորություն կա դարձ առ Աստված:

Առակի գաղափարականի երրորդ հանգամանքն այն է, որ հայրը քաղցրությամբ

ընդունեց և սիրով գրկախառնվեց իր որդուն: Աստված երբեք մեղավորի անկեղծ դարձը և զղջումը չի հանդիմանում, նրա երեսով չի տալիս նրա մեղքերը, այլ ընդհակառակը, չսպասելով նույնիսկ մեղավորի՝ դեպի իրեն գալը, ինքն է ընդառաջ գնում մեղավորին, ինչպես որ արեց անառակ որդու հայրը՝ ընդառաջ գնալով նրան: Եվ ահա այս ամենը Աստված կատարում է սիրով, կատարում է քաղցրությամբ, որպեսզի մարդ արարածը գիտակցի, որ Աստծու համար ոչ թե մարդու դատաստանն է կարևոր, այլ մարդու փրկությունը: Եվ եթե անառակ որդու հայրը՝ մեծահարուստը, անմիջապես հրահանգեց, որ ծառաները բերեն պատմուճան, մեծ-մեծ պատիվների արժանացնեն, նույն կերպով նորադարձի համար Աստված իր հրեշտակներին, իր սրբերի դասին հրահանգում է, որ նրանք պատվով ընդունեն, սիրով և ջերմությամբ ընդունեն նորադարձին, որովհետև ինքը՝ Քրիստոս, եկավ այս աշխարհ մեղավորների համար և ոչ թե նրանց, ովքեր այլևս փրկված էին:

Տեղին է կրկին հիշել Հակոբոս առաքյալի Ընդհանրական թղթից մեկ միտք և. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմերձենա ձեզ, մեղավորներ, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը, երկմիտներ, ուղղեցե՛ք ձեր սրտերը, խոնա՛րհ եղեք Աստծու առաջ, և Նա կբարձրացնի ձեզ»: Ահավասիկ պիտի քաջալերվի մեղավոր մարդը, քաջալերվի՝ տեսնելու համար, որ Աստված միշտ պատրաստ է Իր անբավ ողորմածությամբ ներելու: Եթե մենք մերձենանք Նրան, Նա կշտապի մեզ գրկել, համբուրել, որովհետև այլևս Իր համար փրկված կլինենք:

Սիրելի հավատացյալ և բարեպաշտ ժողովուրդ, Անառակ որդու առակի ամբողջական բովանդակությունը, նրա խորհուրդը գալիս է հուշելու, որ Աստված ամենագութ հայր է: Որ այս աշխարհում ապրելով՝ մարդը բազում փորձությունների է ենթարկվում, բայց Աստված նրից իր գիրկը բացած՝ պատրաստ է ընդունելու յուրաքանչյուր անկեղծ զղջացող մեղավորի: Քանի որ, իբրև քրիստոնյաներ, մեզ համար արդեն ունենք Քրիստոսին որպես Փրկիչ, որ այս աշխարհում ապրեց ոչ միայն արդարների շրջապատում, այլև շրջապատվեց մեղավորներով, մաքսավորներով և այդ ամենի համար նույնիսկ արժանացավ փարիսեցիների ու դպիրների բամբասանքներին, սակայն միշտ մնաց հավատարիմ փրկչական առաքելությանը և հակառակորդներին ասաց, որ «Ես եկել եմ մեղավորների համար»:

Հիսուս այս ամենով առաջ էր քաշում մի նոր գաղափար՝ մարդու հոգևոր կյանքի փրկությունը Աստծու համար, այն մեծ հոգևոր կյանքի, որ ներքին աշխարհ է կոչվում, որ իր մեջ կրում է Աստծու ամբողջական փառքը և նմանությունը: Մեր Տերը այս առակի միջոցով եկավ ասելու, որ մարդկային նոր հարաբերություններ պիտի ստեղծվեն, ընկերային կյանքի նոր արժեքներ պիտի ձևավորվեն, այն է, որ մարդիկ պիտի ներեն միմյանց և ներվեն, սիրեն և սիրվեն: Ի՞նչ ավելի մեծ երջանկություն կա այս աշխարհում, քան՝ ներել և ներված լինել, սիրել և սիրված լինել:

Քննենք մեր աշխարհը, շրջապատը և տեսնենք, թե որքան ենք ներում, որքան ենք սիրում նրանց, ովքեր զղջմամբ դարձի են գալիս, գիտակցում մեղքը: Անշուշտ այս ամենն էլ բոլորի համար չէ, այլ նրանց, ովքեր ունեն մեծ հոգի, լայնախոհություն, մեծ սիրտ և ուժեղ կամք:

Եվ երբեմն մենք էլ, ապրելով անառակ որդու զղջման գիտակցությունը, դիմենք Աստծուն՝ ասելով. «Տեր, մեզ էլ արձակիր մեր մեղքերից, ինչպես որ արձակեցիր անառակ որդուն: Եվ նրա պես արժանի դարձրու Քո ողորմությանը, որով և Քեզ, Որդուն և Սուրբ Հոգուն փառք հավիտյանս հավիտենից: Ամեն»: